



Doi: 10.56737/2953-7843-2022.11-43

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական եւ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՄ

«ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ»-Ի ԺԱՄԱՆԱԿԸ, ԴԵՂԻՆԱԿԸ, ՍՏԵՂՍԱՆ ՉԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ, ԹԱՐԳԱՆԻՉ-ԽՄԲԱԳԻՐԸ

Սկիզբը՝ թիվ ԺԱ.:

* * *

Պատմական իրականությունն արտացոլող ամենահավաստի փաստը, այդ առումով, մինչեւ այժմ աննկատ է մնացել հայագետների ուշադրությունից: Այն թաքնված է Ը. Ճառում (էջ 88—89):

Ս. Հոգու վարդապետությունն առաքյալների եւ մարգարեների միջոցով մեզ՝ հայերիս է ավանդվել, որ ճանաչենք Աստծուն եւ ապրենք Նրա արդար օրենքներով: Իսկ ինչպե՞ս վարվեն այն ազգերը, որոնք չունեն եւ չգիտեն այդ օրենքները: Գրիգոր Լուսավորիչը հարցին պատասխանում է Պողոս առաքյալի օգնությամբ¹՝ դիմելով հարեւան ազգերի՝ պարսիկների եւ հույների, ապա բոլոր ազգերի օրինակին, թե ինչպե՞ս են նրանք ապրում առանց աստվածային օրենքի (= քրիստոնեական կրոնի):

«Նա եւ Պարսիկք եւ այլ խուժադուժ ազգք, որ ոչ գիտեն զօրէնս, բնութեամբ զօրինացն գործեն, ըստ Առաքելոյ բանին, եւ ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս եւ զանիրաւս: Եւ միշտ սպառնալիք իշխանաց եւ դատաւորաց առ անխտիրսն ի չարիս, առ սուտս եւ երգմնասուտս, նենգաւորս, գողս, սպանողս, շունս, կախարդս, դիւթս, եւ որ ի նոյնս են հոյլք մեղաց: Զորս բանդիւք եւ երկաթի կապանօք եւ պէսպէս տանջանօք խոշտանգեն եւ մահ ի վերայ ածեն, զի այլքն երկիւղ ունիցին եւ արգելցին յանխնայ, անօրէնութենէն» (տ, 263—272):

¹ Ճառ Բ., 17:

Թվում է, որ պարսիկների եւ այլ խուժադուժ ազգերի օրինակը միանգամայն իրավացի բերված կարող է լինել Ե. դարում, որովհետեւ այդ ազգերը քրիստոնեություն չէին ընդունել, բայց չշտապենք եւ շարունակենք ընթերցումը:

«Դոյն օրինակ եւ Յոյնք (= Արեւելյան Հռոմեական կայսրությունը) գրով կարգեալ ունին (ոչ թե Ս. Գրքով.— Ա. Ս.) զիրաւունս երախտաւորացն եւ մտերմից պարգեւօք եւ մեծարանօք պատուեն, իսկ անօրինացն եւ անհնազանդիցն եւ ամբարհաւաճիցն եւ անառակիցն եւ պղծոցն պատուհասիւք եւ պատժովք եւ դառն նեղութեամբք նեղեն, զի խրատեսցին ի բաց կալ ի մեղաց եւ գործել զբարիս հանապազօր, զի մի՛ վրդովեսցի աշխարհս յանիրաւաց, այլ խաղաղութիւն եւ զշինութիւն կալցի: Նոյնպէս եւ ամենայն ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին Աստուծոյ, զի ունին կարգիչս եւ իրաւունս դատաստանօք եւ խրատու ուղղել, զի մի՛ ամբօխ եւ մարտ յուզեսցին.... զի չիք ազգք, որոց ոչ իցեն իրաւունք ի դատաւորաց.... թէպէտ եւ ոչ ծանեան զԱստուած եւ փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ խնդրեցին զԱստուած ունել ի գիտութեան, այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց եւ խաւարեցան անմտութեամբ» (տ. 276—295):

Պարզվում է, որ ոչ միայն պարսիկ, այլեւ հույն-հռոմեացի եւ բոլոր այլ ազգերը բնական մղումով են կիրառել պատիժ եւ պարգեւ, ոչ թե Ս. Գրքի աստվածային օրենքով, քանզի չեն ճանաչել ճշմարիտ Աստծուն: Սա նշանակում է միայն մի բան, որ հեղինակն ապրել է Գ.—Դ. դարերում, երբ դեռ չէին եղել առաջին տիեզերաժողովն ու Կոնստանդիանոս կայսեր քրիստոնեհաճ բարեփոխումները: Սա նաեւ նշանակում է, որ Գրիգոր Պարթեւի աչքին Հռոմի կայսրության մեջ տարածված քրիստոնյա համայնքները դեռ չէին որոշում տվյալ ազգի ու երկրի կրոնական դեմքը, քանի դեռ պետությունը չէր ճանաչել այդ կրոնը: Հնարավոր է անգամ նկատել, որ խնդրո առարկա Ը. ճառը գրվել է հայ-հռոմեական պատերազմից առաջ՝ մինչեւ 310 կամ 311 թվերը, մինչեւ քրիստոնյաների հալածանքի ավարտը եւ Գալերիոսի էդիկտը (311 թ.)²՝ քրիստոնյաների հանդեպ հանդուրժողական լինելու մասին:

Այժմ, երբ արդեն կասկածից վեր են «Յաճախապատում»-ի պատկանելությունը Դ. դարի առաջին քառորդին եւ Մաշտոցի՝ հայերեն

² См. А. П. Каздан, От Христа к Константину, Москва, 1965:

Թարգմանած ու խմբագրած լինելը, անհրաժեշտ է ցույց տալ, որ այն դուրս է եկել Հայոց եկեղեցապետ Գրիգոր Պարթևի օտարալեզու գրչի տակից՝ չբավարարվելով եկեղեցական ավանդույթով ամրացված հեղինակային անվամբ:

Այո՛, ամեն մի ճառ առանձին կրում է Գրիգոր Լուսավորչի անունը, բայց դա գալիս է ոչ թե Թարգմանիչ-խմբագրից, այլ օտարալեզու ժողովածուի կազմողից, որովհետեւ վերջինս այդ ճառերը հավաքել է հատ-հատ՝ իբրեւ Գրիգորի գրած թղթեր: Այսինքն՝ պետք է ենթադրել, որ կազմողը պահպանել է նույն գրքի մեջ դրված ճառերի հատ-հատ ունեցած նախկին հեղինակային նշումները: Եթե դա արած լիներ Թարգմանիչ Մաշտոցը, ինչպես ասում են ոմանք՝ կեղծ հիմնավորմամբ, թե իբր գրքի հեղինակությունը բարձրացնելու համար, ապա պետք է ասել, որ Ե. դարում ամենամեծ հեղինակությունները Սահակն ու Մաշտոցն էին, որոնք նույնպես անմիջապես մահից հետո հռչակվեցին սրբեր: Դեռ ավելին՝ ըստ է. դ. Եզնիկ Երեցի՝ Մաշտոցն էր, որ «կարգ գործոցն Գրիգորի նորոգեալ»³, ինչը բնականաբար բարձրացնում էր այդ «կարգի» հավաստիության աստիճանը: Եզնիկի խոսքից պետք է հասկանալ ոչ թե Ս. Գրիգորի ազաթանգեղյան առասպելի մշակումը, ինչպես կարծել է Ն. Մառը⁴, կամ նրա մասին եղած վարքախոսական նյութերի շարադրումը, ինչպես կարծել է Ն. Ադոնցը⁵, այլ այն, որ Մաշտոցը վեր է հանել Ս. Գրիգորի արած գործերը, հաստատած կարգերը եւ կանոնները, նրա գրական ժառանգությունը, այդ թվում եւ «Յաճախապատում»-ը, վերջապես նրա պաշտամունքի եւ հիշատակի տոների հետ կապված հարցերը: Թե չէ միայն վարքի շարադրումը չէր կոչվի գործերի կարգի նորոգում:

Իհարկե, միջնադարում եղել են կեղծ վերագրումներ այս կամ այն հեղինակավոր սրբի անունով, բայց «Յաճախապատում»-ը դրա հետ կապ չունի: Այն գործնական նպատակներով գրական թուղթ-խրատներ-րի, բարոյական հրահանգների, հուզող հարցերի մեկնաբանումների շտեմարան է: Այդ գործնական նպատակադրումը ստիպել է հեղինակին գրել երկխոսական բացատրական ոճով, որի հետքերը պահպան-

³ Ն. Ադոնց, *Երկեր, հտ. Բ.*, Երեւան, 2006, էջ 184–201:

⁴ Տէս Н. МАРР, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб, 1905, էջ 178–180:

⁵ Տէս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 342:

վել են նաեւ հայերեն թարգմանություն մեջ: Օրինակ՝ Բ. ճառում երկխոսական ոճից անգամ կարելի է կռահել, թե ինչ հարց է ուղղված եղել Գրիգոր Պարթևին:

«Այլ թե ասիցէ ոք՝ որպէս ներեաց Աստուած սատանայի՝ այնքան տառածել զմոլորութիւն եւ զանօրէնութիւնս, իմացիր, — պատասխանում է Գրիգորը, — զի իշխանական կամս է հրեշտակաց եւ մարդկան՝ որ յԱստուծոյ պատուեալ, զի որ ընտիրքն իցեն ի նոսա, երեւեսցին եւ ըստ արժանեացն ընկալցին զհաստուցումն» (տ. 474—478)⁶:

ԺԳ. ճառում երկխոսական ոճի միջոցով այնքան հստակ են սահմանազատվում հարցն ու պատասխանը, որ մնում է կիրառել համարժեք կետադրություն. «Եւ եթէ ասիցէ ոք, եթէ զիարդ մօտ ի վախճանն զղջացեալ խոստովանի եւ ողբայ զգործեցեալ զյանցանսն եւ խոստանայ ապաշխարել եւ խնդրել զմարմին եւ զարիւն Քրիստոսի հաւատովք ի քաւութիւն, զինչ առ նոսա յոյս փրկութեան իցէ» (տող 231—235): Սրան անմիջապես հետեւում է պատասխանը. «Զի եթէ մօտ ի վախճան իցեն.... եւ օտարացեալ ի նախախնամական սիրոյն յառաջագոյն դառնայ ի վախճանի ի զղշումն եւ ի խոստովանութիւն.... եւ հայցէ զփրկական խորհուրդն.... մի՛ անյոյս լիցի» (տող 238—243): Այնքան ակնառու է հարց տալը, որ ԺԳ. ճառի գրիչը կամ կազմողը հարցը ձեւակերպելուց հետո բնագրում նշում է «Պատասխանի» բառը, որից հետո բերվում է պարզաբանումը: Բայց երկխոսական ոճը պարտադիր չէ, որ ունենա հարց ու պատասխանի ձեւ, այն կարող է արտահայտվել հենց շարադրանքի բովանդակությամբ, ինչպես դա երեւում է ԻԲ. ճառի առաջին իսկ տողից. «Որ տկարութիւն դնէ աստուածութեանն զօրութեանն, արտաքոյ ճշմարտութեան հաւատոցն է: Զի ասեն՝ երբեմն կարող եւ երբեմն ոչ: Անմիտք, եթէ Աստուած տկարանալով է որ զօրացուցանէ....» (տ. 1—4): Հետեւաբար Գրիգորը բացատրում է, որ Աստված միշտ կատարյալ, զորավոր եւ աննվազ է, անկարող է մարդկանց եւ հրեշտակների օգնության, ինքն է օգնում փոփոխուն արարածներին իրենց կարիքների մեջ, ինչպես, օրինակ, գրում է աստղերի մասին. «Այլ եւ աստեղք ըսպասաւորեն ի զիշերի նաւագնացաց եւ ըստ այլ եւս շարժմանց առ ի պէտս մարմնաւորաց, այլ ոչ ըստ հեթանոսական բարբաջմանցն, որ բախտս եւ ծնունդս ասեն» (տ. 37—40):

⁶ Տե՛ս նաեւ ճառ Ե., տող 210, 217, 239—241, 249, ճառ Թ., տ. 347—355, ճառ ԺԳ., տող 231—246, 249—251, ճառ ԺԵ., տող 106—108, 136—141, 186—191, ճառ ԺԸ., տող 30—31, 48—50, ճառ Ի., տ. 316—317 եւն:

Շատ չծավալվելով՝ ասենք, որ ճառերի երկխոսական ոճն ու բանավիճային ոգին մեզ տանում են դեպի գործնական միջավայր, որտեղ տիրում էր քրիստոնեական ուսմունքի եւ բարոյականության արմատավորման եռուզեռը, եւ որին ներկա էին թե՛ հնաբնակ քրիստոնյաներ, թե՛ նորագարձներ եւ թե՛, մանավանդ, հեթանոսներ, բայց ոչ երբեք՝ հինգերորդդարցիներ: Ուրեմն ո՞վ է, ո՞վ կարող է լինել այս եռուզեռի կենտրոնում, եթե հաշվի առնենք, որ ճառերի մի զգալի մասի հասցեատեր են թեմի առաջնորդները, եկեղեցու մյուս պաշտոնյաները, հատկապես քահանաները եւ վանահայրերը, այսինքն՝ նրանք, ովքեր կոչված էին ուսուցանելու: Իսկ սրանց ուսուցիչը, քարոզիչը, մեկնիչը, բարոյախոսը պետք է որ լիներ տվյալ գործի պատասխանատուն եւ գլխավորը՝ կաթողիկոս Գրիգոր Պարթեւը, որը քարոզչության համար կոչվել է Ագաթանգեղոս (= ավետաբեր, քարոզ), դեռեւս Գ.—Դ. դարերում, իսկ երկիրը դարձի բերելու, մկրտելու եւ եկեղեցավարելու համար կոչվել է Լուսավորիչ՝ Ն. դարում: Այսինքն՝ Գրիգոր Պարթեւը խրատների միջոցով պատրաստում էր ուսուցիչներ, որպեսզի սրանք, ժողովրդի մեջ սերմանելով Ս. Գիրքը, ստեղծեն նոր ուսմունքի կենտրոններ՝ վանքեր:

Օրինաչափ հարց է ծագում. եթե «Յաճախապատում»-ի հեղինակը Գրիգոր Պարթեւն է, ապա ուրեմն հնարավոր են ինչ-ինչ աղերսներ նրա ճառերի եւ մյուս գրվածքների միջեւ, որոնք մեզ են հասել հարցմունքի եւ կանոնի ժանրերով:

Առաջինը վերնագրված է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա»⁷, որից քաղված են Ներսես Մեծի հարցումին ի պատասխան գրված Եպիփան Միայնակյացի թուղթը⁸ եւ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի համապատասխան էջերը⁹, եւ որի վերնագրից կարելի է դատել, որ սա հերթական հարցումն է ի շարս այլ մեզ չհասածների:

Երկրորդը կոչվում է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի յաւելումն Նիկիական»¹⁰, որի 30 կանոնները պարունակում են հրահանգներ, թե ինչ տիպի հանցանքների դեպքում ապաշխարության ինչ ժամկետներ սահմանել: Եւ ահա դրանցից 4-րդ կանոնը պահանջում է, որ «որք երթան ի

⁷ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 72–90:

⁸ Անդ, էջ 49–50:

⁹ Անդ, էջ 78–90:

¹⁰ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 594:

տունս հեթանոսաց եւ ուտեն եւ ըմպեն անխտիր, Գ. ամ արտաքո ապաշխարեն»։ Գրեթե բոլոր մեկնաբանները համակարծիք են Լ. Խաչիկյանի հետ, որը համարում է, որ տվյալ կանոնի գրության ժամանակ «կան դեռեւս մեծ թվով հեթանոսներ, որոնց նկատմամբ քրիստոնյաներից շատերը շարունակում են ունենալ բարիդրացիական հարաբերություններ»։ Բայց անհնար է թվում, որ Դ. Գ. սկզբներին Եկեղեցին արգելեր քրիստոնյաներին՝ հեթանոսների տուն այցելել, որը նոր կրոնի պետականացումից հետո քարոզչության ամենատարածված ձևերից մեկը պիտի լիներ։ Նման այցերով քրիստոնյաները պետք է առինքներին, գրավիչ դարձներին իրենց վիճակը, որպեսզի դարձի բերեին հարեւան հեթանոսներին եւս։ Եւ եթե կանոնը հրահանգում է չայցելել, նշանակում է պետք է այն կարգալ ոչ թե «ի տունս», այլ «ի տաւնս», որտեղ էլ կարող էր լինել ուտել-խմելը։ Այսինքն՝ չի կարելի մասնակցել հեթանոսների տոներին եւ ճաշակել նրանց զոհերը, դրանով քրիստոնյան ակամա դառնում է հեթանոս, որի համար էլ բավականին խիստ պատիժ է սահմանվում՝ ապաշխարել երեք տարի։ Հենց այս նոր ընթերցման շնորհիվ է կանոնը կապվում Գրիգոր Պարթևի եւ նրա ժամանակի հետ, երբ դեռեւս գոյավարում էին հեթանոսական տոներն ու պաշտամունքները։ Ահա սրանք են, որ վերացել էին Ե. դարում, ուստի հնարավոր չէ կանոնի հեղինակ համարել Սահակ Պարթևին կամ Մաշտոցին։ Հետեւաբար 4-րդ կանոնի օրինակով կարող ենք վստահանալ, որ Նիկիականին հավելված 30 կանոնները՝ հավանաբար որոշ լրացումներով, լիովին պատկանում են Գրիգոր Պարթևին, ինչպես վկայում է Լ. Խաչիկյանի մեջբերած ձեռագրի կանոնախմբի (ԺԶ.—Խ.) խորագիրը. «Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն տեառն Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եզնկայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն Վանաց» (ՄՄ, ձեռ. հմր 659, Թ. 227բ)¹¹։

¹¹ Հմմտ. ԱՐԵՎ ՄԽԻԹԱՐԵԱՆՅՑ, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874, էջ 25—37։ Հայտնի է նաեւ այլ տարբերակ՝ առանց Եզնիկի անվան. «Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի։ Ընկալեալ ի քաջ նահատակէն ի տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ միայն ի Յունէ ի Հայ»։ Որից հետո ասվում է. «Արդ եթէ ոք անհնազանդեալ կանոնին՝ նորաձեւել յանդգնեացի զկարգեալ սահմանադրութիւնս, մի՛ ընկալցի մասն եւ վիճակ ժառանգութեան յարքայութեան Քրիստոսի Աստուծոյ»։ Ավարտվում է նորից Գրիգորի հիշատակմամբ. «Որ միաբանեալ կատարեսցէ՝ ընկալցի զօրհ-

Վանական կյանքին վերաբերող կանոն-հրահանգներն առնչվում են «Յաճախապատում»-ի ԻԳ. ճառի հետ, եթե չշփոթենք խմբագիր Մաշտոցի հավելումների հետ, իսկ հեթանոսական կախարդների ու դյուլների թեմայով կանոններն առնչվում են Գրիգոր Պարթևի «Հարցում»-ի հետ: Մեր խնդիրն է վեր հանել նաև «Հարցում»-ի եւ ճառերի առնչությունները, որոնք չեն կարող չլինել, եթե դրանք նույն գրչի արգասիք են: Այսինքն՝ պետք է լրարժեք ակնկալել, որ ինչպես հեղինակը տարբեր ճառերում տարբեր առիթներով կամ կրկնվող հարցերի դեպքում նույն միտքն արտահայտում է նույն կամ հոմանիշ բառերով, բայց ոչ նույն ձևակերպմամբ, կամ ինչպես նույն ճառի տարբեր մասերում նա կարող է կրկնել նույն միտքը փոքր-ինչ այլ նպատակով, այդպես էլ պետք է նույն մտքերը կրկնվեն ճառերի եւ «Հարցմունք»-ի միջեւ: Մանավանդ որ այդ «Հարցում»-ը, ինչպես երեւում է վերնագրից՝ «Դարձեալ հարցումն....», միակը չի եղել, այլ միայն մեկն է մեզ հասել: Անգամ հնարավոր եմ համարում, որ Գրիգոր Պարթևը ոչ թե հարց ու պատասխաններ է հորինել, այլ հարցերին ի պատասխան գրված թղթերը կամ ճառերը ժամանակի ուսյալները հարցմունքի ժանրի են վերածել՝ ընտրելով ամենահրատապ նյութերը եւ բաց թողնելով մյուսները:

Ասվածի հավաստիացման համար պետք է առնվազն ցույց տալ, որ «Հարցում»-ը եւս գրել են հունարեն եւ թարգմանել Ե. դ.՝ նորին Մաշտոցը կամ նրա աշակերտները: Այդ հարցում, բարեբախտաբար, մենք չենք բավարարվի թարգմանության հունարեն ոճը վկայակոչելով, այլ ընթերցողի ուշադրությանը կհանձնենք բնագրային մի նուրբ դիտարկում «Հարցում»-ի էջերից:

Բանն այն է, որ թիվ14 հարցը խորքում սխալ պատկերացումից է բխում, եւ պատասխանը կոչված է նախ այն ճշտելու, ապա բացահայտելու իրականությունը:

«14. Հարցումն. Ծնունդք են դիւաց եւ մահ, աճեն եւ պակասեն:

Պատասխանի. Նախ զայն տեսցուք, թէ գո՞ն այլ արարածք բանաւորք, քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զգեւս....» եւ այլն: Եւ պարզաբանելուց հետո, որ այլ արարածներ չկան, բոլոր անմարմին ոգիները համարվում են թվացյալ՝ ուստի եւ անվանադրված ժողովրդի կողմից: «Թէպէտ եւ ասեն

նութին ի Տեառնէ Աստուծոյ, հաղորդելով պարգեւացն եւ անվախճան հանգստեան եւ երջանիկն Գրիգորի եւ հօր մերոյ Իսահակայ....» (տես Վ. ՀԱՅՈՐԵԱՆ, Կանոնագիրք Հայոց, Ա., էջ 402, ծան. էջ 626):

յուշկապարիկը եւ համբարուք եւ պարիկը եւ պայք, ըստ կարծեալ մտաց մարդկան ասին եւ ոչ ըստ բնութեան, զի դիւաց է կերպարանս ցուցանել, եւ մարդիկ զկերպարանս անուանադրեն... Նոյնպէս եւ գրոց զանուանս նոցա՝ առ ի նշանակելոյ զսաստկութիւն աւերածի աշխարհի, յուշկապարկաց ասեն բնակել յաւերակս, զի ի յոյն լեզուն յուշկապարիկն իշացու թարգմանի»¹²։ Որեւէ այլալեզու բնագրում, եթե այն շունի լեզվաբանական, բացատրական բառարանային բնույթ, ավելորդ կդիտվեր հունարեն զուգահեռ բառը հիշելը։ Դա իմաստ կունենար միայն այն դեպքում, եթե ճառը գրված լիներ հունարեն, եւ կարիք լիներ, հայկական ժողովրդական ոգու անունը բառացի հայերեն գրելուց բացի («յուշկապարիկ»), մոտավորապես համեմատել եւ նմանեցնել կենտավրոսին։ Այսինքն՝ Գրիգոր Լուսավորիչը «յուշկապարիկ»-ը հունարեն թարգմանել է կենտավրոս, իսկ Մաշտոցը կամ Եզնիկը, նորից հետ թարգմանելով հայերեն, ստացել են իշացու։ Կրկնում եմ. եթե բնագիրն ի սկզբանե գրվեր հայերեն, հունարեն բառին դիմելու կարիք չէր լինի։ Դա նշանակում է, որ «Հարցում»-ը գրվել է հունարեն՝ այն էլ Դ. դարի առաջին կեսին։ Ինչո՞ւ։ Որովհետեւ պարզվել է, որ Դ. դարի կեսերին Ներսէս Մեծն այդ նույն ժողովրդական ոգիների մասին հարցում է ուղղել Եպիփան Միայնակյացին, իսկ վերջինս, լինելով հույն, հայ կաթողիկոսին պատասխանել է խնդրո առարկա «Հարցում»-ի օգնությամբ՝ քաղաքելով նրանից մեր իսկ մեջբերած հատվածը թիվ 14 պատասխանից։ Ինչ վերաբերում է «Հարցում»-ի եւ Եպիփանի բնագրային տարբերություններին, ապա, ինչպես իրավամբ գրել է մեր երախտաշատ ուսուցիչ Լ. Խաչիկյանը, «Նկատվող տարբերությունների մի մասը հավանաբար առաջացել է այն ժամանակ, երբ այդ զույգ բնագրերը տարբեր անձնավորությունների կողմից հունարենից թարգմանվել են հայերեն»¹³։ Ասված է ճշգրիտ։

Արդ, եթե «Հարցում»-ից այդքան վաղ օգտվել է Եպիփանը, մյուս կողմից էլ, եթե հաջողվի ցույց տալ, որ «Հարցում»-ը «Յաճախապատում»-ի հետ ունի ընդհանուր թեմա եւ արտահայտման նման լեզվամիջոցներ, ապա կարող ենք վստահ լինել, որ «Հարցում»-ի հեղինակը եւս Գրիգոր Պարթեւն է, ինչպես պահպանվել է հայ ձեռագրային ավանդույթում։

Այսպես՝ համադրենք «Յաճախապատում»-ի եւ «Հարցում»-ի մի քանի դրվագներ։

¹² Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 84։

¹³ Անդ, էջ 50։

1. ՅՃԽ. «Զի եթէ ոչ էր ահ Տեառն ի վերայ մեր, ամենեքեան զմեզ սատակէին» (Ճառ Դ., տ. 200–201):

Հարցումն. «...թէ ոչ Աստուծոյ ահն պահէր՝ ազգի-ազգի խեղդութեամբք խեղդէին»¹⁴:

Հետաքրքիր է, որ Եզնիկ Կողբացին այս միտքը գործածել է երկու անգամ, մեկը՝ «Յաճախապատում»-ից¹⁵, մյուսը՝ «Հարցում»-ից:

Եզնիկ. «Զի եթէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել» (էջ 16):

Եզնիկ. «Եթէ ոչ Աստուծոյ սաստ պահէր, ազգի ազգի խեղդութեամբք խեղէին եւ անհնարին մահուամբք սպանանէին» (էջ 83): Կարելոր է նշել, որ երկու դեպքում էլ Եզնիկը չէր կարող չգիտակցել, որ իր աղբյուրը Գրիգոր Լուսավորիչն է, որովհետեւ նա ստեղծագործել է իր ուսուցիչ Մաշտոցի անմիջական իրազեկման պայմաններում:

2. ՅՃԽ. «Սոյնպէս եւ անմարմին զօրացն է իշխանական կամօք կալ ի հրամանի... Այլ եւ զապստամբսն ի նոցանէ իսկ ասի սատանայ, եւ որք ընդ նովաւ զօրք, այսք պիղծ եւ շարասէրք անուանին» (Ճառ Դ., տ. 236–237, 240–242):

Հարց. «...զի այնու զմարդիկ յԱրարչէն ապստամբեցուցէ» (էջ 89):

3. ՅՃԽ. «...այլ յաստուածայնոցն իմացեալք ի ճշմատութեան աւանդիցն սուրբ Գրոց եւ յուղիղ հանգամանաց» (Ճառ Ի., տ. 450–451):

Հարց. «ՅԱստուածային Գրոց եւ ի բնութենէ արարածոց յայտ է» (էջ 84):

4. ՅՃԽ. «...զի Ես եմ, ասէ Տէր, որ սպանանեմ եւ կեցուցանեմ, հարկանեմ եւ բժշկեմ եւ ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ ի ձեռաց Իմոց»¹⁶ (Ճառ Ի., տ. 444–446):

Հարց. «...զի ի ձեռս Աստուծոյ է ամենայն, որպէս ասաց մարգարէին. Եւ սպանանեմ եւ ես կեցուցանեմ» (էջ 80):

5. ՅՃԽ. «Եւ այն որ ի տղայութեան եւ ի մանկութեան առնու զվախճանն աշխարհիս, զերծեալ լինի ի փորձութեանց հոգւոց աշխարհականաց, եւ զգուշութիւն լինի» (Ճառ ԺԵ., տ. 35–37):

¹⁴ Անդ, էջ 83: Այսուհետ էջերը կնշվեն փակագծով:

¹⁵ Եզնիկի այլ քաղումներ «Յաճախապատում»-ից տե՛ս Գ. ԳԱԼԷՄՔԱՐԵԱՆ, Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ Ընդդէմ աղանդից մատենի, Վիեննա, 1919, էջ 16–17 եւ այլ հեղինակներ:

¹⁶ Հմմտ. Բ. Օր., ԼԲ., 39:

Հարց. «Եւ տղայոցն յայն սակս պատահի այն (վախճանը.— Ա. Ս.), զի մի՛ արդարն ի բարիս գործելոյ դադարեսցէ, եւ մի՛ մեղաւորն ի մեղս յամել կարասցէ» (էջ 79):

Ավելորդ չեմ համարում անելու մի զուգադրում նաեւ «Հարցում»-ի եւ «Վարդապետութեան» միջեւ՝ նկատի ունենալով վերջինիս եւ «Յաճախապատում»-ի միջեւ եղած բնագրային կապը:

6. Հարց. «....ընդ բարբառ բանիցն նայիցիս, թէ ընդ ճշմարտութիւն իրացն» (էջ 74):

Վարդ. «Եւ զինչ իցէ որ ասէ Բանն, մի՛թէ բարբառ լոկ իցէ» (Յ424):

Իսկ վերջում «Հարցում»-ից մեջբերենք ամենատարածված հարցը (թ. 13) համայն քրիստոնյա աշխարհում, որի պատասխանը եւս շատ տարածված է:

7. «13. Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՛ տիրեցեն դեւք»:

Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած.... զորոց ասէ իսկ. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: Արդ, զի իբրեւ յորդիս մատուցեալ է մեզ Աստուած առ երբեմն խրատել.... Ապա մինչ այսու եւս ոչ խրատիմք, ի մեզ առաքէ տանջանս պէս պէս ցաւոց.... մտանէ եւ դիւաց զտղայս մեր, զի ի միտ առցուք, թէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն ո՛ւր ապրի» (էջ 78—79), շարունակությունը բերված է վերը՝ թ. 2): Այս մեջբերման համար բնագրային եւ գաղափարային զուգորդումներ կարելի է գտնել նախ եւ առաջ «Յաճախապատում»-ի եւ «Վարդապետութեան» մեջ, որոնց հղումները բաց եմ թողնում ժամանակի սղության պատճառով:

8. Օրինակները սահմանափակենք եւս մի մեկբառանոց համադրումով, որը, սակայն, օժտված է հոգեբանական բնութագրական ուժով: «Յաճախապատում»-ի ճառերից մեկում հեղինակը գուցե փոքր-ինչ համառող այլախոհներին անվանում է «անմիտներ» (Ճառ. ԻԲ.): Նույն կերպ «անմիտ» է անվանում «Հարցում»-ի զրուցակցին, որ կարծում է, թե արալեզր պատերազմում զոհվածին լիզելով ողջացնում է. «Անմիտ, արդ զի՛ չբժշկեն, ո՛չ նոյն պատերազմունք եւ արդ են» (էջ 86): Այս մի հատիկ բառով արտահայտված է նույն բանավիճային կիրքը երկու բնագրերում էլ:

Այսպիսով՝ արված բնագրային համադրումներից կարելի է համոզվել, որ «Յաճախապատում»-ի եւ «Հարցում»-ի միջեւ կան ոչ միայն եւ ոչ

այնքան բառացի բնագրային համընկնումներ, որքան մտքի, մտածողության, թեմաների եւ աշխարհայցքի նույնություն: Իսկ այդ նույնության աղբյուրը, որից առատորեն ըմպել են Սահակն ու Մաշտոցը՝ իրենց աշակերտներով, Գ. դ. վերջի Ագաթանգեղոս եւ Դ. դ. առաջին քառորդի կաթողիկոս Գրիգոր Պարթեւն է:

Պատմաբանասիրական հետազոտության շղարշի տակ «Յաճախապատում»-ի երկարատեւ չարչրկման հետեւանքով այն որպէս Մաշտոցի գործ ճանաչելն ուղիղ կապ ունի գիտության մեջ եւս Գրիգոր Պարթեւի անձի առասպելականացման հետ: Պատկերացնել, թե ինչպէս կարելի է «Յաճախապատում»-ի հիման վրա բնութագրել Մաշտոցի հայացքները, դրա վառ ապացույցն է¹⁷: Գրիգոր Լուսավորիչն իր իսկ գործի հեղինակ դառնալու համար նախ պետք է վերաճանաչվեր իբրեւ պատմական հասարակական-քաղաքական գործիչ ու նոր կրոնի քարոզիչ:

Այժմ, երբ դա արված է, հարկ է արդեն «Յաճախապատում»-ի եւ մյուս գրվածքների բովանդակությունից բխեցնել հեղինակի իրական աշխարհայացքը, ճարտասանական արվեստը, վերջապէս նրա տողերի միջից առանձնավորվող այն անձը, որն առանց սրբի պսակի՝ պիտի փառավորվի հայ եւ համաշխարհային մտքի, քրիստոնեական մշակույթի պատմության մեջ իբրեւ մեծագույն բարոյաբան:

Այսինքն՝ Ագաթանգեղոսի «Պատմութեան» հերոս Գրիգորից բացի՝ ուսումնասիրել եւ վերականգնել նաեւ ագաթանգեղոս Գրիգոր Պարթեւին, որը, անկախ Եկեղեցու ընկալումից ու սրբացումից, դարձել է աշխարհում առաջին պետական Եկեղեցու կազմակերպիչը Մեծ Հայքում Դ. դարի առաջին քառորդում:

Շարունակությունը՝ հաջորդիվ



¹⁷ Նման փորձ արել են նաեւ Մատենադարանի տնօրեններ Ս. Արեւշատյանը (Григорий Просветитель, Многовещательные речи, пер. с древнеармянского, предисловие и примечания С. С. Аревшатяна, Ереван, 2011, էջ 5–14, նաեւ С. С. АРЕВШАТЯН, Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Ереван, 1973, էջ 44–73) եւ Հր. Թամրազյանը (Ստեղծագործ անհատի եւ արվեստի տեսության խնդիրները Մեսրոպ Մաշտոցի «Հաճախապատում ճառերում», ԲՄ, Թ. 19, Երեւան, 2012, էջ 9–20):